


Գիտական խորհրդի նախագահ՝



Հ. Վ. Թոքմաջյան

**ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

**ՄԱՍ 1. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

**Նախաբան**

Շուշիի տեխնոլոգիական համալսարանը (այսուհետ՝ Համալսարան) գիտակցում է, որ մասնագիտության կրթական ծրագրերի գնահատումը ունի կարևոր ազդեցություն ծրագրերի կառուցվածքի և բովանդակության, դասավանդման և ուսումնառության բարելավման առումով, և ձգտում է գնահատման գործընթացը կազմակերպել արդյունավետ, հավաստի և հիմնավորված:

Ծրագրերի գնահատման գործընթացն արդյունավետ է, եթե գնահատումը.

- դիտարկվում է որպես համընդհանուր, համակարգված և անընդհատ գործընթաց,
- դիտարկվում է որպես ինքնազարգացման միջոց,
- ներառում է չափման սանդղակ և համապատասխան հիմքեր,
- օգտագործվում է որպես կառավարման գործիք,
- արդյունավետ է և օգտագործվում է ծրագրերի և գործընթացների բարելավման համար,
- կազմակերպվում է այնպես, որ գործընթացներին մասնակցում են ուսանողները, դասախոսները և այլ շահակիցներ:

Ծրագրերի գնահատման պլանը կազմելիս անհրաժեշտ է հստակեցնել գնահատման ուղղվածությունը և նպատակը:

**Նպատակը**

Քաղաքականությունը սահմանում է այն սկզբունքները և արժեքները, որոնք ձևավորում են ծրագրերի գնահատման մոտեցումները Համալսարանում:

Գնահատման քաղաքականությունը կարևորում է՝

- 1) ուսումնական ծրագրերի գնահատումը,
- 2) ուսումնառության ձևավորող և արդյունահեն գնահատումները,
- 3) գնահատման գործընթացում հետադարձ կապի դերը,
- 4) մասնագիտության կրթական ծրագրի իրականացման ռեսուրսները,
- 5) գնահատման գործընթացի կառավարումը,
- 6) գործընթացի կազմակերպման որակի ապահովումը և ծրագրերի բարելավումը:

**Կիրառման ոլորտ**

Քաղաքականությունը կիրառվում է հետևյալ ոլորտների նկատմամբ՝

- 1) ուսումնական ծրագրեր,
- 2) ուսանողների ուսումնառություն,

- 3) դասավանդման որակ.
- 4) կրթական ծրագրի իրականացմանը անընթաց դասուցանող ապահովում:

## Նկարագրություն

### 1. Գնահատում

Գնահատումը գործընթաց է. երբ սահմանված չափանիշներով գնահատման դատողություններ են արվում ուսումնական ծրագրերի բովանդակության, դասավանդման և ուսումնառության կազմակերպման, կրթման զորոշիչացում անհրաժեշտ ռեսուրսների ապահովման և ուսանողների ուսումնառության որակի նկատմամբ:

Գնահատումը հետապնդում է մի շարք նպատակներ. ներառելով՝

- 1) ուսումնական ծրագրի բովանդակության գնահատում.
- 2) դասավանդման գնահատում.
- 3) աջակցություն ուսանողներին ուսումնառության ընթացքում,
- 4) ուսանողի ուսումնառության ընթացքում ձեռք բերումների չափում և ուսումնառության մակարդակի որոշում,
- 5) դասավանդման և ուսումնառության ռեսուրսների մշտադիտարկում և արդյունավետության չափում:

### 2. Ուսումնառության արդյունքներ

Ուսումնառության արդյունքները ունակությունների սահմանումներն են, որոնք ուսանողը պետք է ունենա կամ ձեռք բերած լինի կրթական ծրագրի ուսումնառության ավարտին: Ուսումնառության արդյունքները ենթական են գնահատման:

### 3. Գնահատման չափանիշներ

Գնահատման չափանիշները կրթական ծրագրի բովանդակության և նրա իրականացման արդյունավետության և որակի հավաստիացման սահմանումներն են: Դրանք ներառում են այն կետերը, որոնց նպատակն է գնահատել և ցույց տալ, որ մասնագիտության կրթական ծրագիրը բովանդակային առումով համապատասխանում է պետական կրթական չափորոշիչներին, դասավանդման մակարդակը, որ ուսանողը հասել է անհրաժեշտ մակարդակի ուսումնառության ընթացքում և պատրաստ է որպես տվյալ ոլորտի մասնագետ:

Գնահատման չափանիշները ցուցիչներ են, որոնք ապահովում են գնահատման արդյունավետությունը, հավաստիությունը և օբյեկտիվությունը:

### 4. Հետադարձ կապ

Գնահատումը հետադարձ կապով օգնող մեխանիզմ է հասկանալու համար արդյոք գնահատման մեթոդները և մոտեցումները ճիշտ են իրականացվում: Հետադարձ կապը կարող է հաստատվել շահակիցների հետ՝ հարցումների և ֆոկուս-խմբերի միջոցով:

Գնահատման հետադարձ կապը պետք է օգնի գնահատման համակարգի ձևավորողներին շտկել գնահատման համակարգում եղած թույլ կողմերը, ապահովել նրա հուսալիությունը և օբյեկտիվությունը:

Հետադարձ կապը թույլ է տալիս բարելավել գնահատման գործընթացը շահակիցներից ստացած արձագանքի հիման վրա:

### Քաղաքականության իրականացումը

Գնահատման մեթոդների և մոտեցումների մշակումը, ներդրումը և կառավարումը պետք է երաշխավորի, որ ուսանողը ուսումնառության ընթացքում ձեռք է բերել մասնագետ դառնալու համար անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ:

Գնահատման գործընթացի նկարագրական սրբան բերված է հավելվածում:

Գնահատման քաղաքականության իրականացման անհրաժեշտ փաստաթղթերն են՝

- 1) գնահատման ընթացակարգերը.
- 2) գնահատման չափանիշները և ցուցիչները:

### **Իրավասությունները և պատասխանատվությունը**


Գնահատման քաղաքականության մշակման, ներդրման և իրականացման պատասխանատուներն են՝

- 1) Ուսումնական աշխատանքների գծով ռեկտորի տեղակալը.
- 2) Որակի ապահովման բաժինը,
- 3) ֆակուլտետների ղեկանները և ֆակուլտետներում որակի գծով պատասխանատուները:

### **Քաղաքականության վերանայումը**

Քաղաքականությունը և ընթացակարգը ենթակա են փոփոխման կամ վերանայման Համալսարանի գիտական խորհրդի կողմից՝ նրանց իրականացման արդյունավետության գնահատման արդյունքում:

Կրթական ծրագրերի գնահատման գործընթացի նկարագրական սխեմա



## ՄԱՍ 2. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

### Նպատակը

Կրթական ծրագրերի գնահատումը հիմք է հանդիսանում նրա բաղադրիչների որակի բարելավմանը և որակի ապահովման մշակույթի ձևավորմանն ու հաստատմանը:

Կրթական ծրագրի գնահատման նպատակներն են.

- բարելավումը - գնահատման գործընթացը պետք է ապահովի հետադարձ կապ շահակիցներից, որոշելու համար թե կրթական ծրագիրը ինպես բարելավել,
- տեղեկատվությունը - գնահատման գործընթացը պետք է ապահովի տեղեկատվությամբ ֆակուլտետներին և այլ որոշումներ կայացնողներին՝ հետագա գործընթացները կազմակերպելու և իրականացնելու համար,
- աջակցությունը - գնահատման գործընթացը պետք է աջակցի որոշումների կայացման գործընթացներին, որոնցից են կրթական ծրագրի վերանայումը, ռազմավարական պլանավորումը, հավատարմագրումը:

### Խնդիրները

Կրթական ծրագրերի որակի գնահատման խնդիրներն են.

- 1) ստուգել նրա բաղադրիչների վիճակը,
- 2) մշադիտարկել ըստ գնահատման ցուցիչների,
- 3) վեր հանել թերությունները,
- 4) կազմակերպել ուղղիչ գործողություններ,
- 5) բարելավել կրթական ծրագրի որակը:

### Գնահատման առարկաները

Գնահատման առարկաներ են հանդիսանում.

- 1) ուսումնական պլանը,
- 2) առարկայական ծրագրերը,
- 3) դասավանդման գործընթացը,
- 4) ուսումնառության արդյունքները,
- 5) ուսանողների գնահատման մեթոդները:

### Գնահատման ցուցիչները

Կրթական ծրագրի գնահատումն իրականացվում է ըստ գնահատման ցուցիչների՝ համապատասխան «Կրթության որակի գնահատման ցուցիչների անվանացանկի սահմանման» կարգի:

### Գնահատման մեթոդները

Կրթական ծրագրերի բաղադրիչները գնահատվում են հարցումների, ֆոկուս-խմբային քննարկումների, ըստ գնահատման ցուցիչների մշտադիտարկման արդյունքների միջոցով:

### Իրավասություններ և պատասխանատվություն

**Ուսումնական պլանի գնահատման** համար իրավասու են ֆակուլտետի խորհուրդը, Համալսարանի գիտական խորհուրդը, որակի ապահովման բաժինը: Ուսումնական պլանները գնահատելիս ներգրավում են արտաքին շահակիցներ՝ կրթության, ագրարային, ճարտարապետաշինարարական և այլ ոլորտների մասնագետներ:

**Առարկայական ծրագրերի գնահատման** համար պատասխանատու են ամբիոնները, ֆակուլտետի գիտական խորհուրդը, որակի ապահովման բաժինը:

Դասավանդման գործընթացի գնահատման համար իրավասու են ուսանողները և

## ՄԱՍ 2. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

### Նպատակը

Կրթական ծրագրերի գնահատումը հիմք է հանդիսանում նրա բաղադրիչների որակը բարելավմանը և որակի ապահովման մշակույթի ձևավորմանն ու հաստատմանը: Կրթական ծրագրի գնահատման նպատակներն են.

- բարելավումը - գնահատման գործընթացը պետք է ապահովի հետադարձ կաաշահակիցներից, որոշելու համար թե կրթական ծրագիրը ինչպես բարելավել,
- տեղեկատվությունը - գնահատման գործընթացը պետք է ապահովի տեղեկատվությամբ ֆակուլտետներին և այլ որոշումներ կայացնողներին՝ հետագա գործընթացները կազմակերպելու և իրականացնելու համար,
- աջակցությունը - գնահատման գործընթացը պետք է աջակցի որոշումների կայացման գործընթացներին, որոնցից են կրթական ծրագրի վերանայումը, ուղղորդված արձանագրումը, հավատարմագրումը:

### Խնդիրները

Կրթական ծրագրերի որակի գնահատման խնդիրներն են.

- 1) ստուգել նրա բաղադրիչների վիճակը,
- 2) մշակիտարկել ըստ գնահատման ցուցիչների,
- 3) վեր հանել թերությունները,
- 4) կազմակերպել ուղղիչ գործողություններ,
- 5) բարելավել կրթական ծրագրի որակը:

### Գնահատման առարկաները

Գնահատման առարկաներ են հանդիսանում.

- 1) ուսումնական պլանը,
- 2) առարկայական ծրագրերը,
- 3) դասավանդման գործընթացը,
- 4) ուսումնառության արդյունքները,
- 5) ուսանողների գնահատման մեթոդները:

### Գնահատման ցուցիչները

Կրթական ծրագրի գնահատումն իրականացվում է ըստ գնահատման ցուցիչների՝ համապատասխան «Կրթության որակի գնահատման ցուցիչների անվանացանկի սահմանման» կարգի:

### Գնահատման մեթոդները

Կրթական ծրագրերի բաղադրիչները գնահատվում են հարցումների, ֆոկուս-խմբային քննարկումների, ըստ գնահատման ցուցիչների մշտադիտարկման արդյունքների միջոցով:

### Իրավասություններ և պատասխանատվություն

**Ուսումնական պլանի գնահատման** համար իրավասու են ֆակուլտետի խորհուրդը. Համալսարանի գիտական խորհուրդը, որակի ապահովման բաժինը: Ուսումնական պլանները գնահատելիս ներգրավվում են արտաքին շահակիցներ՝ կրթության, ագրարային. ճարտարապետաշինարարական և այլ ոլորտների մասնագետներ:

**Առարկայական ծրագրերի գնահատման** համար պատասխանատու են ամբիոնները. ֆակուլտետի գիտական խորհուրդը, որակի ապահովման բաժինը:

Դասավանդման գործընթացի գնահատման համար իրավասու են ուսանողները:

որակի հանձնախումբը:

**Ուսումնառության ռեսուրսների ապահովվածության գնահատումը** իրականացնում են ուսանողները և որակի ապահովման բաժինը:

**Դասավանդման ռեսուրսների ապահովվածությունը** բնութագրվում է դասավանդող անձնակազմի և որակի ապահովման բաժնի կողմից:

**Ուսանողների առաջընթացը** գնահատվում է դասավանդող անձնակազմի կողմից:

**Ուսանողների գնահատման մեթոդները** ուսումնասրվում և գնահատվում են ամբիոնների, ֆակուլտետի խորհուրդների և որակի ապահովման հանձնաժողովի կողմից:

#### **Հետադարձ կապ**

Կրթական ծրագրերը գնահատելիս ուսանողները սաա է ապահովվում ուսանողների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի և այլ շահագրգռվածների հետ:

#### **Տվյալների օգտագործում կրթական ծրագրի բարելավման համար**

Կրթական ծրագրերի մշտադիտարկման և ստուգումների ընթացքում հավաքագրված տվյալները պահվում են որակի ապահովման բաժնի տվյալների բազայում, ենթարկվում են վերլուծության, որակական և քանակական բնութատման: Դրանք հիմք են ծառայում կրթական ծրագրերի բարելավմանը ուղղված որոշումների կայացման ժամանակ:

#### **ՄԿԾ-երի գնահատման մեխանիզմներ**

1. Մասնագիտությունների կրթական ծրագրերի գնահատում Համալսարանի շահակիցների հարցախույզների միջոցով:
2. Մասնագիտությունների կրթական ծրագրերի որակավորման ազգային և սեկտորիալ շրջանակներին, պետական կրթական չափորոշիչներին համապատասխանության գնահատում:
3. Մասնագիտությունների կրթական ծրագրերի գնահատում որակի ապահովման արտաքին փորձագետների կողմից (ծրագրային արտաքին աուդիտ):
4. Մասնագիտությունների կրթական ծրագրերում ներառված առարկայական ծրագրերի (մոդուլների) ներքին գնահատում կրթության որակի կառավարման հանձնաժողովի կողմից:
5. Առարկայական ծրագրերի մասնագիտական գրախոսություն ներքին և արտաքին մասնագետ-փորձագետների կողմից:
6. Մասնագիտությունների կրթական ծրագրերի բաղադրիչների գնահատում հարցախույզների, ներքին և արտաքին աուդիտների միջոցով:
7. Մասնագիտությունների կրթական ծրագրերի գնահատում ծրագրային հավատարմագրման ժամանակ:

Գիտական խորհրդի նախագահ՝



Հ.Վ.Թոքմաջյան

Գիտական քարտուղար՝



Ա.Ա.Առաքեյան